

Անվանում	Սկիզբ՝ առանց %
Տեսակ	Պայմանագրի ֆինանսավորում
Նպատակ	Կառուցապատողից բնակարան / թաունհաուս և ավտոկայանատեղիի ձեռքբերման նպատակով տարաժամկետ պայմանագրի ֆինանսավորում.
Գումարի չափ/միջակայք	2,000,000-100,000,000 ՀՀ դրամ
Արժույթ	ՀՀ դրամ
Ժամկետ	Մինչև 24 ամիս • ոչ ավել քան շինթույլտվության վերջնաժամկետը, • շինթույլտվության վերջնաժամկետի երկարաձգման դեպքում, երկարաձգվում է նաև ֆինանսավորման ժամկետը.
Տարեկան անվանական տոկոսադրույք՝	0 %
Պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկ և դրանց չափ/միջակայք	Միջնորդավճար- հայտի ուսումնասիրության վճար `սահմանված է բանկի սակագներով.
Երրորդ անձանց կողմից մատուցվող օժանդակ ծառայություններ	• Անշարժ գույքի գնահատում (անհրաժեշտության դեպքում), • ապահովագրություն
Վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները	Բացասական վարկային պատմություն, գործող ժամկետանց պարտավորությունների բացակայություն.
Մարումների հաճախականություն	Ամենամյա՝ պայմանագրի գումարի 1 % - ի չափով (անշարժ գույքի արժեք)
Մարումների եղանակ	ամսական
Ապահովության (գրավի) տեսակ	• Ձեռք բերվող անշարժ գույքի գնման իրավունքը , • Երրորդ անձի երաշխավորություն – բանկի որոշմամբ.
Ապահովագրության պահանջի առկայություն	Պարտադիր
Նվազագույն կանխավճար	• Սկսած 10% - բնակարան / թաուն հաուսի համար , • Սկսած 15% - ավտոկայանատեղիի համար
Տույժերի կիրառման դեպքերը և չափը	Երկու և ավելի հաջորդող աշխատանքային օր ժամկետանցի դեպքում ժամկետանց գումարի 2 %-ի չափով միանվագ տույժ
Ֆինանսավորման կարգը	• Ֆինանսավորում կատարվում է ինչպես գործող ,այնպես էլ նոր կնքվող տարաժամկետ պայմանագրերի համար, • Անկանխիկ եղանակով՝միանվագ փոխանցվում է կառուցապատողի նոր բացված հատուկ հաշվին. • Պայմանագրի ավարտից հետո, հաճախորդը հնարավորություն ունի ձևակերպել հիփոթեքային վարկ, առանց եկամուտների հիմնավորման, առնվազն 30 %-ի չափով կանխավճար կատարած լինելու դեպքում.
Վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները	Հնարավոր է՝ առանց տույժերի

Վարկի ձևակերպման վայր	Մասնաճյուղ
Որոշման կայացման և որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ	Որոշման կայացման առավելագույն ժամկետ - 4 օր Որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ - 1 օր
Վարկը սպառողի տրամադրելու կարգ և ժամկետ	Պայմանագիրը պետական գրանցում ստանալուց 1 օր հետո
Դրական որոշման գործոններ	Ոչ բացասական վարկային պատմություն, գործող ժամկետանց պարտավորությունների բացակայություն.
Բացասական որոշման գործոններ	Բացասական վարկային պատմություն, գործող ժամկետանց պարտավորություններ, եկամուտների անբավարար լինելը.
Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	Ներկայացնում է գնորդը՝ 1. Դիմում (սահմանված ձևով), 2. Անձնագիր կամ նույնականացման քարտ, 3. Սոցիալական քարտ 4. Տեղեկանք բնակության վայրից (3-րդ ձև ԲՇՏ-ից), 5. Տեղեկանք աշխատանքի վայրից, որտեղ պարտադիր պետք է նշվի հաճախորդի զբաղեցրած պաշտոնը, ամսական աշխատավարձի չափը և/կամ եկամուտների հայտարարագիր (սահմանված ձևով), 6. Եթե հաճախորդը ունի սեփական բիզնես, ապա ներկայացվում են՝ կանոնադրությունը, տեղեկանք պետ. ռեգիստրից կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ և եկամուտների հայտարարագիր (սահմանված ձևով), 7. Այլ փաստաթղթեր (օրինակ՝ տեղեկանք՝ պարտադիր սոց. ապահովագրության վճարների վերաբերյալ, գնորդի այլ սեփականությունը հավաստող փաստաթղթերի պատճեններ և այլն), 8. Եթե գնորդը ամուսնացած է՝ 8.1 Ամուսնու անձնագիր կամ նույնականացման քարտ, 8.2 Ամուսնության վկայական, 8.3 Ամուսնու համաձայնությունը վարկ ստանալու, բնակարան գնելու և գրավադրելու վերաբերյալ, 9. Անհրաժեշտության դեպքում՝ Երրորդ անձի երաշխավորություն (երաշխավորողի անձը և վճարունակությունը հավաստող

	փաստաթղթեր՝ ֆինանսական հաշվետվություններ և այլն), Վաճառողը/ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԸ/ ներկայացնում է՝ 1. Կառուցապատողի կանոնադրություն, 2. Պետ Ռեզիստրի վկայական, 3. Սեփականության վկայական, 4. Շին թույլտվություն, 5. Ավարտական ակտի առկայության դեպքում, նաև ավարտական ակտ:
--	--